ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

588-Ա 12 հունիսի 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության լեզվի կոմիտեի կանոնադրությունը՝ համաձայն Հավելվածի:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.06.2018

X

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2018 թվականի հունվարի 12-ի
N 588-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) լեզվի կոմիտեն (այսուհետ՝ Լեզվի կոմիտե) նախարարությանը ենթակա մարմին է:

2. Լեզվի կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

3. Լեզվի կոմիտեն գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

4. Լեզվի կոմիտեի անվանումն է՝

1) հայերեն՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Լեզվի կոմիտե.

2) ռուսերեն՝ Комитет по языку министерства образования и науки Республики Армения.

3) անգլերեն՝ Language Committee under the ministry of education and scienceof Republic of Armenia.

4) ֆրանսերեն՝ Comité de Langue du Ministère de l'Enseignement et des Sciences de la République d'Arménie:

5. Լեզվի կոմիտեն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով, ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Լեզվի կոմիտեն կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Լեզվի կոմիտեի կառուցվածքում ընդգրկվում են Լեզվի կոմիտեի նախագահի, Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալի, Լեզվի կոմիտեի նախագահի խորհրդականի

(առկայության դեպքում), Լեզվի կոմիտեի նախագահի օգնականի, Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալի օգնականի պաշտոնները և կառուցվածքային ստորաբաժանումները:

7. Լեզվի կոմիտեին Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

8. Լեզվի ոմիտեի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Կիևյան 16:

II. ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Լեզվի կոմիտեի նպատակներն և խնդիրներն են՝

1) ժամանակակից գրական հայերենի կանոնարկմանը, բառակերտման, տերմինաբանության (եզրաբանության), ուղղագրության, ուղղախոսության, տառադարձության և կետադրության կանոնարկման սկզբունքների մշակմանը պաստելը:

2) Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը և տարածմանը աջակցելը:

3) հայերենի ուղղագրության միասնականացմանը նպաստելը

4) Հայաստանի Հանրապետության տարածքում ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը երաշխավորելը:

III. ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Լեզվի կոմիտեի գործառույթներն են՝

1) մասնակցում է լեզվի բնագավառում քաղաքականության մշակմանը և ապահովում այդ քաղաքականության իրականացումը, ինչպես նաև մշակում է լեզվի բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերը.

2) ապահովում է՝

ա. օրենքի պահանջների կատարումը և լեզվական քաղաքականության պետական ծրագրի իրականացումը,

բ. հայերենի կանոնարկումը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում դրա լիակատար գործածությունը,

գ. ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը.

3) աջակցում է՝

ա. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական լեզվական քաղաքականության իրականացմանը,

բ. հեռուստառադիոընկերությունների՝ մշակութային, տեղեկատվական, տեղեկատվական-վերլուծական, հասարակական-քաղաքական, գիտահանրամատչելի, կրթական և մարզական հաղորդումների լեզուն գրական հայերենը լինելու պահանջի կատարմանը.

4) իրականացնում է լեզվաքարոզչություն, լեզվական փորձաքննություն, լեզվավիճակի մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, վերլուծություններ, կանխարգելիչ միջոցառումներ, գնահատումներ, ինչպես նաև կազմակերպում լեզվաքաղաքականության հարցերին նվիրված միջոցառումներ, խորհրդակցություններ, գիտաժողովներ, սեմինարներ, ասուլիսներ.

5) լեզվական պարզաբանումներ է տալիս հայերենի կանոնարկման և կիրառման, անձնանունների, հայրանունների և ազգանունների, աշխարհագրական տեղանունների, ինչպես նաև առանձնահատուկ բարդության տերմինների, հասկացությունների վերաբերյալ.

6) նպաստում է՝

ա. Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը,

բ. ոչ հայախոսների համար լեզվական ուսուցման հատուկ ծրագրերի մշակմանը:

III. ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Լեզվի կոմիտեն կառավարում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը (այսուհետ՝ նախարար):

13. Նախարարը՝

1) հաստատում է Լեզվի կոմիտեի կանոնադրությունը, կառուցվածքը և կատարում կանոնադրության փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

2) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է Լեզվի կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները.

3) իրականացնում է Լեզվի կոմիտեի գործունեության վերահսկողությունը.

4) լսում է Լեզվի կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում Լեզվի կոմիտեին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

6) հաստատում է տարեկան հաշվեկշիռը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

14. Լեզվի կոմիտեն ղեկավարում է Լեզվի կոմիտեի նախագահը:

15. Լեզվի կոմիտեի նախագահին անմիջական հաշվետու են Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալը, Լեզվի կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների, հիմնարկների ղեկավարները, Լեզվի կոմիտեի նախագահի օգնականը և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

16. Լեզվի կոմիտեի նախագահը հաշվետու է Կառավարությանը, վարչապետին և նախարարին:

17. Լեզվի կոմիտեի նախագահը՝

1) պատասխանատու է Լեզվի կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) իրականացնում է Լեզվի կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կառավարումը.

4) օրենքով կամ Լեզվի կոմիտեի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Լեզվի կոմիտեի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) հաստատում է ներքին կարգապահական կանոնները.

6) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ.

7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները.

8) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հանձնարարականները.

9) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Լեզվի կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները, հանձնարարականները.

10) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների, Լեզվի կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

18. Լեզվի կոմիտեի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալը:

19. Լեզվի կոմիտեի հաստիքացուցակը Լեզվի կոմիտեի նախագահի առաջարկությամբ հաստատում է նախարարը:

20. Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալը՝

1) գործում է Լեզվի կոմիտեի նախագահից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարարված ոլորտում.

2) իր լիազորությունների շրջանակներում Լեզվի կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, Լեզվի կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպություններին և հիմնարկներին փոխանցում է Լեզվի կոմիտեի նախագահի հանձնարարականները, ապահովում է Լեզվի կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների, Լեզվի կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կողմից Լեզվի կոմիտեի նախագահի հանձնարարականների կատարումը, իր լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Լեզվի կոմիտեի նախագահին.

3) իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

4) իր լիազորությունների շրջանակներում Լեզվի կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ.

5) կատարում է Լեզվի կոմիտեի նախագահի կողմից տրված ցուցումները և հանձնարարականները:

21. Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալը կարող է ունենալ օգնական: Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալն իր օգնականի անմիջական ղեկավարն է: Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալի օգնականն անմիջական հաշվետու է Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալին:

22. Լեզվի կոմիտեն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում նախարարության գլխավոր քարտուղարի միջոցով:

V. ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

23. Լեզվի կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) լեզվական վերահսկողության բաժին.

2) վարչական իրավախախտումների բաժին:

25. Լեզվի կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է Լեզվի կոմիտեի նախագահը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

VI. ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՒՅՔԸ

26. Լեզվի կոմիտեն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

27. Լեզվի կոմիտեի գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով կոմիտեի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

28. Լեզվի կոմիտեին հանձնվող գույքի կազմն ու չափը որոշում է Կառավարությունը:

29. Լեզվի կոմիտեն տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

VII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

27. Լեզվի կոմիտեի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

28. Լեզվի կոմիտեի աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով: